

Իրավական տեղեկատվության ապահովումը Հայաստանում Ինտերնետի միջոցով

Իրավունքի գերակայության սկզբունքը և իրավական տեղեկատվության անսահման տարածումը անհրաժեշտ են դեմոկրատական հասարակության նորմալ կենսագործունեության համար:

Հայաստանի Հանրապետության սահմանադրության 24 հոդվածը սահմանում է՝
«...Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:»

Հաճախ, երբ խոսվում է այն մասին, որ քաղաքացին տեղեկատվություն ստանալու իրավունք ունի, վերջինս մեկնաբանվում է որպես մամուլի ազատություն: «Քաղաքացին տեղեկատվություն ստանալու իրավունք ունի» արտահայտությունը հաճախ օգտագործվում է լրագրողների կողմից, որպեսզի արդարացվի կասկածի տեղիք տվող նյութերի տարածումը: Սակայն, «տեղեկատվություն ստանալու քաղաքացու իրավունքը» սահմանադրական իրավունք է և ունի նաև այլ իմաստ, որը կապ չունի մամուլի ազատության հետ, այլ բխում է հասարակության շահերից և բովանդակում է այն, որ ժողովուրդը, հասարակությունը իրավունք ունի մշտապես ծանոթանալու պետական մարմինների գործունեությանը, որն էլ ենթադրում է պետական մարմինների «թափանցիկ կառավարում»: Դեմոկրատական կառավարման համակարգը, որքան հնարավոր է, պետք է լինի բաց և «թափանցիկ»: Որպեսզի ապահովվի կառավարման թափանցիկությունը, նախ, յուրաքանչյուր ոք պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու պետական փաստաթղթերին, որտեղ արձանագրվում է պետական մարմինների գործունեությունը: Նման տեղեկատվությունը պետք է մատչելի լինի հասարակության համար և հասարակական հսկողության համար: Կարևոր է նշել նաև, որ պետական իշխանության գործունեության թափանցիկությունը ապահովելը բարդ և ծախսատար գործընթաց է: Նյութական միջոցներ են պահանջվում տեղեկատվության որոնման, փաստաթղթերի և վերլուծությունների պատրաստման, բազմացման, համակարգման, պահպանման համար և այլն:

Սակայն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և համակարգչային արդի հնարավորությունները թույլ են տալիս խնայել և՛ ժամանակը, և՛ նյութական միջոցները: Այժմ արդեն հնարավոր է դարձել հավաքել, պահպանել, մշակել և փոխանակել տեղեկությունները էլեկտրոնային ձևով: Բացի դա, այսօր մենք ունենք համընդհանուր տեղեկատվական դաշտ՝ Internet, որտեղ մարդիկ ամբողջ աշխարհում ունեն արագ և էժան ցանկացած տեղեկատվություն ձեռք բերելու հնարավորություն, որի համար բավական է, օգտագործելով համակարգիչը, կատարել որոնում: Մի ամբողջ սերունդ աշխարհում տեղեկատվության մատչելիությունը Internet-ում դիտում է որպես բնական իրավունք: Հետևաբար դեմոկրատական պետությունների ժողովուրդները ձգտում են այդ իրավունքը տարածել սեփական պետության հետ հարաբերությունների վրա: Պետական փաստաթղթերին on-line ռեժիմով ծանոթանալու հնարավորության տրամադրումը դիտվում է որպես դեմոկրատական պետության հիմնական պարտականություններից մեկը: Մեր օրերին, քաղաքացիները ոչ միայն ունեն տեղեկատվություն ստանալու իրավունք, այլև իրավունք ունեն տեղեկատվություն ստանալ on-line ռեժիմով: Այսպիսով, «պետական փաստաթղթեր» տերմինը բովանդակում է նաև փաստաթղթեր, որոնք պահվում են էլեկտրոնային տեսքով: Internet-ի ձևավորմամբ, երբ փաստորեն տնտեսության մասնավոր բնագավառի կազմակերպությունները ակտիվ ստեղծում են իրենց Web (տեղեկատվական ռեսուրս, շտեմարան) էջերը, պետությունը ստիպված է մրցակցել էլեկտրոնային ծառայությունների շուկայում:

Տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովումը պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ենթադրում է՝

- . տեղեկատվությունը պետք է լինի բաց և մատչելի
- . տեղեկատվությունը պետք է լինի հավաստի և ամբողջական

. տեղեկատվությունը պետք է տրամադրվի ժամանակին

. տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Կփորձենք լուսաբանել դեմոկրատիայի կարևոր պայմաններից մեկի՝ քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքի, իրագործման սահմանները մեր հանրապետությունում Internet-ի միջոցով:

Այսօր ՀՀ-ում Web էջեր ունեն ՀՀ նախագահը, Ազգային ժողովը, Կառավարությունը, 15 նախարարություններից յոթը, 11 կառավարությանն առընթեր մարմիններից յոթը, Սահմանադրական դատարանը, կա նաև դատական համակարգին նվիրված էջ: Web էջեր ունեն այնպիսի պետական կառույցներ ինչպիսին է Կենտրոնական բանկը, Արժեթղթերի հանձնաժողովը, Ազգային վիճակագրական ծառայությունը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններից Web էջ ունի Գյումրիի քաղաքապետարանը և Լոռու մարզպետարանը:

Կան նախարարություններ, որոնք արդեն սկսել են էլեկտրոնային էջ պատրաստելու աշխատանքները, մասնավորապես՝ Արդարադատության նախարարությունը, Գյուղատնտեսության նախարարությունը, Էներգետիկայի նախարարությունը:

Սոցիալական ապահովության նախարարության ինտերնետային էջը գտնվում է վերակառուցման ընթացքում:

Web էջ չունեն այնպիսի պետական կառավարման մարմիններ, ինչպիսին են, օրինակ, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը, Քաղաքաշինության նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարությունը, Արտակարգ իրավիճակների վարչությունը, ՀՀ Ոստիկանությունը, Ջրային տնտեսության պետական կոմիտեն, Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը:

Էլեկտրոնային էջ չունեն նաև Երևանի քաղաքապետարանը, մարզպետարանները և թաղապետարանները, Քաղաքացիական ծառայության խորհուրդը, Կառավարման ակադեմիան:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պետական մարմինները իրենց տեղեկատվական ռեսուրսները պատրաստել են հիմնականում 2002թ., միայն Սահմանադրական դատարանի կայքն է գործում 1997 թ-ից:

Էլեկտրոնային տեղեկատվություն ունենալը դա նոր հազարամյակի բնութագրիչներից է, որը կարևոր է հասարակության դիմամիկ ու ներդաշնակ զարգացումն ապահովելու համար: Ինչպես նշեցինք, սա նաև սահմանադրական իրավունք է: Բայց ինչպես կարող է ՀՀ-յան քաղաքացին, որը գուցե չի տիրապետում և պարտավոր էլ չէ տիրապետելու անգլերեն լեզվին, օգտվել իր իրավունքներից, երբ որոշ պետական մարմինների կայքերը միայն անգլերեն լեզվով են: ՀՀ Լեզվի մասին օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ՝ «ՀՀ պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները»: Իսկ օրինակ՝ Առողջապահության նախարարության և Արտաքին գործերի նախարարության կայքերը միայն անգլերեն լեզվով են:

Իրավական պետության պահանջներից է այն, որ օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, հատկապես, մարդու իրավունքներին վերաբերող, մատչելի լինեն և պետությունը պետք է երաշխավորի տեղեկություն ստանալը ցանկացած քաղաքացու կողմից: Պետական կառավարման մարմինների կայքերի արդի վիճակի վերլուծությունները ցույց են տալիս, որ այս իրավունքից մեր քաղաքացիները լիարժեք չեն կարող օգտվել:

Մասնավորապես, ՀՀ նախագահի կայքում չկա ոչ մի նորմատիվ իրավական ակտ: Կարծում ենք, էլեկտրոնային ռեսուրսներից օգտվող յուրաքանչյուր ոք նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները ակննկալում է որոնել ՀՀ նախագահի Web կայքում:

Ազգային ժողովի Web կայքում կա «օրենսդրություն» բաժին, որտեղ գետեղված են օրենքներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանց ցանկը սպառնիչ չէ: Մասնավորապես կայքում բացակայում է ընտանիքի և անուսնության մասին օրենսդրություն, քաղաքացիական դատավարական օրենսդրություն և այլն: Կառավարության կայքը նույնպես ունի «կառավարության որոշումներ» բաժին, որը գտնվում է մշակման փուլում: Իսկ սա նշանակում է, որ քաղաքացիները կրկին հնարավորություն չունեն ծանոթանալու կառավարության որոշումներին Internet-ի միջոցով:

Բնապահպանության նախարարության կայքում թվարկված են բնապահպանական ոլորտին առնչվող կոնվենցիաները, որոնց բովանդակությունը, ցավոք, բացակայում է:

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կայքում նույնպես օրենսդրության բովանդակության էլեկտրոնային տարբերակ չկա, միայն թվարկվում են նորմատիվ իրավական ակտերի անվանումները:

Մյուս կողմից, Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կայքում տեղադրված են այս ոլորտին վերաբերող թվով 46 օրենքներ և որոշումներ, որոնց մեծ մասի բովանդակությունը առկա է:

Կրթության և գիտության նախարարության կայքում կրթական ոլորտին առնչվող օրենքները տեղադրված են, բացի դա, այստեղ դիմորդը կարող է ծանոթանալ մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկին, ընդունելության կանոններին, դիմում-հարցաթերթիկներին և այլն:

Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կայքում կա «ՀՀ գնումների բաժին», որտեղ կան [գնումների մասին ՀՀ օրենքները](#), [կառավարության եվ վարչապետի որոշումները](#), [լիազոր մարմնի կողմից ընդունված իրավական ակտերը](#):

Տրանսպորտի և կապի նախարարության կայքում նորմատիվ իրավական ակտերն առկա են իրենց բովանդակությամբ, կան նաև օրենքների նախագծերը:

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կայքում տեղադրված է հարկային օրենսդրությունը: Այստեղ «կառավարության որոշումներ» բաժինը գտնվում է նախագծման փուլում, առկա են միջազգային փաստաթղթեր: Աչքի է ընկնում այն հանգամանքը, որ այս կայքում կան նաև դիմումների օրինակելի ձևերը և լրացման կարգը:

ՀՀ մաքսային պետական կոմիտեի կայքում տեղադրված են թվով 18 օրենք, որոնց մի մասի բովանդակությունը առկա է, թվով 72 մաքսային հարաբերությունները կարգավորող որոշումներ, որոնց բովանդակության էլեկտրոնային տարբերակ չկա, սակայն մատնանշված է պաշտոնական տեղեկագրերի տարեթիվը և համարը, և 15 գերատեսչական նորմատիվ ակտեր: Այստեղ նույնպես առկա են հայտարարագրի օրինակելի ձևը, ամփոփագրի, բեռնագրի և այլն:

Դատական համակարգում Web էջ ունի Սահմանադրական դատարանը, որը աչքի է ընկնում իր հարուստ և բազմաբովանդակ իրավական տեղեկատվությամբ: Սահմանադրական դատարանի ինտերնետային էջի օրենսդրական դաշտը բովանդակում է և՛ մարդու իրավունքների միջազգային փաստաթղթեր, և՛ ներպետական օրենսդրություն, և՛ դատական որոշումներ: Սահմանադրական դատարանի կայքում առկա են դատարանի բոլոր որոշումների էլեկտրոնային տարբերակները:

Դատական համակարգին նվիրված ինտերնետային էջում քաղաքացին կարող է ծանոթանալ դատարան դիմելու և դատական որոշումները բողոքարկելու կարգին, դատարանների նախագահների խորհրդի որոշումներին: Կայքում կա «Վճռաբեկ դատարանի, Տնտեսական դատարանի, Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի, Քրեական գործերով վերաքննիչ դատարանի որոշումներ» բաժին, որը, սակայն, թերի է, քանի որ վճիռները,

դատավճիռները և որոշումները անհասկանալի ձևով թվարկված են, իսկ բովանդակությունը բացակայում է:

Կենտրոնական բանկի կայքում «օրենսդրական դաշտ» բաժնում տեղադրված են նորմատիվ իրավական ակտեր:

Արժեթղթերի հանձնաժողովի կայքում տեղադրված են և՛ օրենքները, և՛ հանձնաժողովի որոշումները, և՛ օրենքի նախագծերը: Այստեղ քաղաքացին կարող է ծանոթանալ դիմումների ձևերին և լրացման կարգին: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայքում կա «կանոնադրություն և օրենք» բաժին, որտեղ տեղադրված են օրենքների էլեկտրոնային տարբերակները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում կան «ՀՀ ընտրական օրենսգիրք» և «ԿԸՀ որոշումներ», որտեղից կարելի է ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն:

Գյուլնրիի քաղաքապետարանի կայքում կա «պաշտոնական տեղեկատվություն» բաժին, որը մշակաման փուլում է, և ոչ մի իրավական տեղեկատվություն չի բովանդակում:

Քաղաքացին տեղեկություններ փնտրելու, ստանալու սահմանադրական իրավունք ունի: Սա նշանակում է, որ պետությունը, պարտավոր է ապահովել տեղեկության որոնման և ձեռք բերման հնարավորություն: Պետությունը, պետական իշխանության բոլոր թևերը պետք է երաշխավորեն տեղեկության ազատ որոնումը և տեղեկություն ստանալը: Շատ կարևոր է, որ պետական իշխանության մարմինների կայքերում գործեն որոնման համակարգեր: Որոնման համակարգ ունեն միայն Արտաքին գործերի նախարարության, Մաքսային պետական կոմիտեի, Պետական գույքի կառավարման վարչության, Ազգային վիճակագրական ծառայության, Վճռաբեկ դատարանի կայքերը: Որոնման համակարգ ունի նաև Հարկային պետական ծառայության կայքը, որը, սակայն, չի գործում:

«Տեղեկատվության մատչելիությունը» ներառում է նաև տեղեկատվության ձեռք բերում «հարցումների» միջոցով: Պետական մարմինները պետք է հնարավորություն ընձեռեն ազգաբնակչության բոլոր խավերին իրենց հետաքրքրող հարցերն ուղղել պաշտոնատար անձանց էլեկտրոնային փոստի միջոցով և պատասխաններ ստանալ:

Ինտերնետային էջի նպատակն է թափանցիկ և արագ ներկայացնել պետական մարմինների գործունեությունը, տնտեսական քաղաքականությունը և նախաձեռնությունները, բարեփոխումները, Հայաստանում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունները: Հանրությունը պետք է կարողանա գտնել անհրաժեշտ տեղեկատվություն, որը կներկայացնի մեր երկրի հանգամանալի և ճշմարտացի պատկերը:

Կարևոր է, որպեսզի ինտերնետային էջերը մշտապես թարմացվեն, մշտապես համալրվեն տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվությամբ, միջազգային փաստաթղթերով, օրենքներով և օրենքների փոփոխություններով, ՀՀ Նախագահի հրամանագրերով եւ կարգադրություններով, կառավարության, վարչապետի որոշումներով, ՀՀ վճռաբեկ դատարանի, վերաքննիչ դատարանի և առաջին ատյանի դատարանի որոշումներով, վճիռներով եւ դատավճիռներով, ՀՀ նախարարների հրամաններով, մարզպետների, Երեւանի քաղաքապետի որոշումներով եւ կարգադրություններով, ՀՀ համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի որոշումներով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով եւ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշումներով ու կարգադրություննով, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով: Անհրաժեշտ է շեշտը դնել նաև իրավական ակտերի բովանդակության առկայության վրա:

Ինտերնետային էջերը պետք է լինեն կենդանի, և քաղաքացին, գտնվելով ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ տարածքից դուրս, պետք է համոզված լինի, որ էլեկտրոնային ռեսուրսները թարմ են և սպառիչ:

Ինտերնետում պետք է գործի տեղեկատվության հետ աշխատանքի ընդհանուր սկզբունք՝
աշխատանքի համակարգման ընդհանուր կանոններ, ձև և տակտիկա: Դրա համար անհրաժեշտ
է, որպեսզի մշակվի և ընդունվի նորմատիվ իրավական ակտերի կլասսիֆիկատոր՝ մեկ,
ընդհանուր բոլորի համար:

Վահանյան Գրիգոր,
ՀՀ ՍԴ խորհրդական,
իրավա - տեղեկատվական ծառայության ղեկավար,
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հարթենյան Մարգարիտա
Իրավաբան, Հայ - ռուսական (սլավոնական) համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի տեղեկատվական իրավունքի դասախոս

// Օրենք և Իրականություն. - 2003. - հ. 21 - 22